

ՊԱՀՔ ՓՈՐՉՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

Հոգեշնորհ եւ բարեշնորհ հոգեւոր հայրեր եւ եղբայրներ, սիրելի հաւատացեալներ. Երուսաղեմում շատ գեղեցիկ սովորութիւն է ստեղծուել՝ Մեծ Պահֆի ընթացքին հաւաքուել իւրաքանչիւր Երեմիաքի եւ Հինգշաբթի օրերը Սուրբ Եկեղեցւոյ կամարների տակ եւ աղօթքով խորհրդածել փրկութեան մասին: Մեծ Պահֆի ընթացքը նոյնանում է Քրիստոսի մկրտութիւնից յետոյ, անապատի քառասնօրեայ փորձութիւնների հետ:

Որո՞նք են մեղքի աստիճանները ըստ եկեղեցւոյ վարդապետների: Մեղքը ունի չորս աստիճաններ եւ ինչպէս սատանան փորձեց Յիսուսին անապատում, այդպէս էլ կարող է մօտենալ մարդուն: Մօտենալով նախ խօսում է նրա սրտի հետ, որից յետոյ մարդ կարող է սատանայի խորհուրդը ընդունել իր մտածումներով, խորհուրդներով հեշտանալ դրանց մէջ, կատարելով եւ գործադրելով այն փոխանցի նաեւ ուրիշին: Ահաւասիկ մեղքի չորս աստիճանները, որոնք գեղեցկապէս ցոյց է տալիս Ծննդոց գիրքը, նախամարդու Ադամի օրինակով: Ինչպէս սատանան օձի կերպարանով մօտեցաւ Եւային առաջարկեց նրան պտուղը, ցոյց տալով թէ որքան փառք է եւ գեղեցիկ: Եւ նաշակելով երբէք չի մեռնի, այլ միայն աչքերը կը բացուեն եւ կը դառնայ Աստուծոյ նման (Ծննդոց Գ 5), նոյն օրինակով էլ մարդուն է մօտենում եւ խորհուրդներ առաջարկում: Եւ ինչպէս Եւան ընդունեց այդ խորհուրդը, եւ նաշակեց պտուղը, յետոյ տուեց Ադամին (Ծնն. Գ 6), նոյն օրինակով նաեւ մենք ընդունելով թշնամու խորհուրդները, ի վերջոյ գործադրում ենք դրանք, որոնցից փրկի մեզ Աստուած:

Ուրեմն սրտի մէջ ընդունելով սատանայի խորհուրդը մարդ հեշտանում է այդ մեղքի մէջ եւ մարդկային հոգին Ադամի նման՝ ի վերջոյ գործակից է լինում Եւային, որ ասեմք մարմինն է: Իսկ հոգին որ գերագոյնն է, ինչպէս Տէրը Աւետարանի մէջ ասում է. «Հոգին առաւել է քան զմարմին» (Յովն. Զ 64), հնազանդում է մարմնին եւ սկսում է կատարել մարմնի կամքը: Սակայն ինչպէս Քրիստոս խոնարհուեց, երկնից երկիր իջաւ մարդկային ազգը փրկելու համար, որ էր նոր Ադամ, Քրիստոս՝ նոր մարդ, եկաւ եւ մեզ ցոյց տուեց ինչպէս կարող ենք գերծ մնալ այդ տեսակ-տեսակ փորձութիւններից:

Երեք կերպով փորձեց սատանան Քրիստոսին: Նախ՝ մօտեցաւ նրան երբ նա փառասուն օր եւ փառասուն գիշեր ծոմ

պահեց եւ քաղց զգաց, յայնժամ սատանան մօտեցաւ Նրան եւ ասաց. «Եթէ Աստուծոյ Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն» (Մտթ. Դ 3): Ուրեմն սատանան մեզ կարող է փորձել որկրամոլութեամբ: Ուստի պահեով սովորում ենք որկրամոլութիւնից գերծ մնալ:

Որից յետոյ, երբ չի կարողանում յաղթել, Նրան տանում է Սուրբ Քաղաք, Տանարի բարձր աշտարակի վրայ կանգնեցնելով ասում է. «Զէ՛ որ Աստուծոյ Որդին ես դու, եւ գրուած է Քո մասին, եթէ Քեզ այստեղից վայր գցես, ապա Աստուծոյ հրեշտակներին պատուիրուած է Քո մասին, եւ ձեռքերի վրայ պիտի վերցնեն քեզ, որպէսզի երբեք Քո ոտքը քարին չիսկես» (Մտթ. Դ 6): Ուրեմն սատանան մեզ կարող է փորձել հպարտութեամբ:

Ի վերջոյ մի բարձր լեռան վրայ է բարձացնում, ըստ Սուրբ Երկրի աւանդութեան այդ վայրը Փորձութեան լեռն է, եւ ցոյց է տալիս աշխարհի չորս ծագերը եւ ասում Նրան. «Տեսնում ես այս բոլորը, Քեզ կը տամ, եթէ գետին ընկնելով ինձ երկրպագես» (Մտթ. Դ 9): Քրիստոս պատասխան է տալիս նրան եւ ասում. «Գրուած է Սուրբ Գրքում, ինձ պիտի պաշտես միայն, եւ միայն ինձ պիտի երկրպագես, ասում է Աստուած» (Մտթ. Դ 10): Ուստի կարող է մեզ փորձել նաեւ ազահութեամբ:

Պահոց մեծ շրջանը մեզ սովորեցնում է այս փորձութիւններից գերծ մնալ, եթէ պահենք պահքը: Սակայն ինչպէս մեր հայրերը ասացին նախկինում, պահքը միայն կերակուրներից գերծ մնալը չէ, այլ կարող է նաեւ մտքի պահք լինել, որպէսզի մեր միտքը սուրբ եւ մաքուր պահենք: Աչքի պահք, որ մեր աչքերը երբեք արատութեամբ չնայեն: Ականջի պահք, երբեք չախորժենք լսել չար բաներ: Սրտի պահք, որպէսզի երբեք չախորժենք չար խորհուրդներ հետապնդելու: Զեռքերի պահք, չարիք չգործենք, այլ ընդհակառակը բարիք: Ոտքերի պահք, որպէսզի երբեք անօրէն նանապարհներով չընթանանք:

Մարդ արարածին իր հինգ զգայարաններով կարելի է նմանեցնել մի ամբողջի, կամ մի պարսպապատ քաղաքի: Վերջինիս դարպասները կարելի է նմանեցնել մարդու զգայարանների հետ, եւ ինչպէս մարդիկ դարպասներով քաղաք են մտնում եւ դուրս գալիս, նոյնպէս մարդու զգայարաններով սատանան իր խորհուրդներով կարող է մտնել եւ դուրս գալ: Ուստի եւ մենք Տիրոջ նման պէտք է զգօն լինենք: Մեր երկնաւոր բժիշկը Յիսուս Քրիստոս՝ պահեով եւ Աստուծոյ խօսքը ուսուցանելով մեզ տուեց մեր բժշկութեան դեղը, տուեց մեզ այն միջոցը, որով կարող ենք գերծ մնալ տեսակ-տեսակ

փորձութիւններից, որոնք կարող են գալ մարդկային ազգի վրայ:

Ուստի եւ դիմենք Քրիստոսին, ամրանանք Նրանով, կատարենք Նրա սուրբ կամքը, որպէսզի գերծ մնանք փորձութիւններից եւ նմանուենք Նրան:

Տէրը՝ ինքը փորձութիւնները յաղթելով եւ իւրաքանչիւր կայանի մէջ մտնելով ազատեց մեզ տուեալ կայանի մէջ պատահող մեղքի պատճառներից: Օրինակի համար, Յիսուս քաղց զգաց: Միթէ՞ Աստուծոյ Որդին կարող էր քաղց զգալ: Միթէ՞ Աստուծո՞ւ կարող էր քաղց զգալ: Նա որ ստեղծել էր երկինքն ու երկիրը, Նա որ կերակրիչն է ամենքի, Նա որ բոլոր բոյսերը տնկեց, իւրաքանչիւր կենդանի արարեց եւ նրան հրաման տուեց բազմանալու, միթէ Նա կարո՞ղ էր քաղց զգալ: Հապա ի՞նչ կարիք ունէր Քրիստոս քաղց զգալու: Քրիստոս քաղց զգաց մեզ համար սիրելիներ, որպէսզի մենք երբ քաղց զգանք իմանանք, որ երբէք կարիքը չունեննք Եսաւի նման մէկ աման ապուրի համար մեր անդրանկութիւնը վաճառելու, այլ Յակոբ նախահօր նման ամրանանք մեր հաւատով եւ յաղթենք թշնամու յարձակումը (Ծնն. ԻՆ 29-34):

Քրիստոս մարդ էր եւ Նա նաեւ քնեց, ննջեց ինչպէս որ մարդու մարմինը ըստ մարդկային օրէնքի պէտք է հանգստանայ: Սակայն մեր հանգիստը պէտք չէ լինի հեշտութեան հանգիստ, գէշ հանգիստ: Այլ մեր հանգստի մէջ մենք պէտք է իմանանք, որ այդ հանգիստը ոչ թէ մարմնի հեշտութեան համար է, այլ վերստին Տիրոջը ծառայելու համար է: Տէրը ննջեց մեզ համար, որպէսզի մեզ մեր ախտաւոր մտքերից, գէշ երազներից հանի, մաքրի, սրբի: Այս ցանկը սիրելիներ կարելի է երկարել:

Եզրափակելով ասենք որ Եկեղեցւոյ մէջ եօթը խորհուրդներ են սահմանուած եւ ըստ այդ եօթը խորհուրդների, Քրիստոսի Սուրբ Եկեղեցին հաստատել է մի սքանչելի զանգուած մարդկային հոգիները փրկելու համար: Խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ վերստին մեզ համար բացուել են երկնքի արքայութեան դռները, որպէսզի մենք բոլոր սրբերի հետ փառաւորենք Ամենասուրբ Երրորդութիւնը՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԱԲՂ. ԱԹԱԶԱՆԵԱՆ